ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-232-11.04.2022-ՊԻ-011/0), «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-232[1]-11.04.2022-ՊԻ-011/0), «ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-232[2]-11.04.2022-ՊԻ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Կառավարություն**	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ)	Առաջարկվում է ՀՀ քրեական նոր օրենսգրքի (այսուհետ՝ Քրեական օրենսգիրք) 13-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մասով. «4. Սույն հոդվածով նախատեսված կանոնները կիրառվում են համապատասխան դատական ակտը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելուց հետո:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագիծ, հոդված 41	Առաջարկվում է Քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասում «հանցանքը համարվում» բառերից և «կատարված հանցանքն» բառերից հետո «առանձնապես ծանր» բառերը փոխարինել «առանձնապես ծանր կամ ծանր» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագիծ, հոդված 64	Առաջարկվում է Քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը լրացնել նոր՝ 8-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «8. Սույն հոդվածի իմաստով պատժից խուսափող է համարվում այն դատապարտյալը, որը երկու և ավելի անգամ խախտել է դատարանի սահմանած արգելքը:»: Այս լրացմամբ կապահովվի պատժից խուսափելու դեպքերը նյութական իրավունքում նախատեսելու միասնականությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագիծ, հոդված 157	Առաջարկվում է Քրեական օրենսգրքի՝ ծննդկանի կամ ծննդաբերի կողմից երեխայի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			սպանությանը վերաբերող հոդվածը հստակեցնել՝ նշված հոդվածով փոխնակ մոր պատասխանատվության հարցը ևս կարգավորելու համար: Մասնավորապես՝ առաջարկվում է Օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասում «իր» բառը փոխարինել «իրենից ծնված» բառերով:		
		Նախագիծ, հոդված 236	Առաջարկվում է Քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի վերնագրում և հոդվածի 2-րդ մասում կատարել համապատասխան լրացում արարքը նյութապես շահագրգռելու եղանակով կատարելու մասով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագիծ, հոդված 288	Առաջարկվում է Քրեական օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասում «մարմնի կողմից» բառերից հետո լրացնել «սեփականությամբ տվյալ ֆիզիկական անձին, անհատ ձեռնարկատիրոջը կամ իրավաբանական անձին պատկանող գույքը ոչնչացնելու, ակնհայտ կեղծ կամ շինծու գործարքներ կնքելու կամ այլ եղանակով» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագիծ, հոդված 290	Առաջարկվում է Քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասում «5» թիվը փոխարինել «10» թվով, իսկ «15» թիվը՝ «20» թվով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագիծ, հոդված 415	Առաջարկվում է Քրեական օրենսգրքի՝ կարանտինի պայմաններում մեկուսացման (ինքնամեկուսացման) և անհատական պաշտպանության միջոցների կիրառման կանոնները խախտելու համար պատասխանատվություն նախատեսող 415-րդ հոդվածում հստակեցնել, որ խոսքը վերաբերում է միայն կարանտին սահմանելու համար հիմք հանդիսացած վարակով վարակելուն:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագիծ, հոդված 551	Առաջարկվում է Քրեական օրենսգրքի անցումային դրույթներում կարգավորել անչափահասների վերականգնողական հաստատության վերաբերյալ կարգավորումների ուժի մեջ մտնելու ժամկետները: Սույն օրենսգրքով նախատեսված՝ անչափահասների վերականգնողական հաստատությունում տեղավորելու և հաստատության ծրագրերին մասնակցելու վերաբերյալ դրույթներն ուժի մեջ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			են մտնում օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան՝ անչափահասների վերականգնողական հաստատություն ստեղծելուց և շահագործման հանձնելուց հետո, սակայն ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը:		
		Նախագիծ	Առաջարկվում է նաև շտկել տեխնիկական վրիպակները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) եզրափակիչ մասում առաջարկվում է սահմանել, որ վարութային գործողությունների՝ էլեկտրոնային եղանակով ամրագրմանը վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է Օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասում «դատախազն իրավասու է քրեական հետապնդում իրականացնելու» բառերը փոխարինել «դատախազի նախաձեռնությամբ քրեական հետապնդումն իրականացվում է» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է Օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «4) եզրափակիչ ելույթներին պատրաստվելու համար:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և	Առաջարկվում է Օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ մասում «կամ փոխելու» բառերը փոխարինել «, փոխելու կամ անփոփոխ թողնելու» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

		լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ			
		«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է Օրենսգրքի 347-րդ հոդվածի 7-րդ մասում «չկիրառելու կամ պատժից ազատելու» բառերը փոխարինել «չնշանակելու» բառով, իսկ «կիրառելու» բառը՝ «նշանակելու, պատժից ազատելու» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է Օրենսգրքի 419-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասում «հատուկ ուսումնադաստիարակչական» բառերը փոխարինել «վերականգնողական» բառով. 2) 2-րդ մասում «Հատուկ ուսումնադաստիարակչական» բառերը փոխարինել «Վերականգնողական» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է նաև շտկել տեխնիկական վրիպակները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում առաջարկվում է ապահովել եզրութաբանական միասնությունը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխանեցնել գույքի վրա կալանք դնելու և քրեական վարույթով գույքի բռնագանձմանն առնչվող կարգավորումները:	Ընդունվել է:	Ընդունվել է:

		«Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	«Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծից առաջարկվում է հանել այն կարգավորումները, որոնք դուրս են գալիս փաթեթի՝ նոր օրենսգրքերին օրենսդրության հարմոնիզացիան ապահովելու նպատակի շրջանակներից:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ	«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում առաջարկվում է նախատեսել քրեական վարույթի շրջանակներում գրավը պետության եկամուտ դարձնելու ամբողջական կառուցակարգը:	Ընդունվել է:	Ընդունվել է: